

## ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

«ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԳԵԼՈՑ-ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՊՈԱԿ-Ի ԵՎ «ԵՐԵՎԱՆԻ «ՄԽԻԹԱՐ ՍԵՔԱՍՏԱՑԻ» ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ-Ի ՄԻՋԵՎ

Ք. Երևան

05.04.2013

Սույն համագործակցության համաձայնագիրը կնքվում է ՀՀ մշակույթի նախարարության «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի և ՀՀ ԿԳՆ «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Կողմեր) միջև:

### 1. Կրթամշակութային համագործակցության նպատակը

ա) Համաձայնագիրը մշակույթի և կրթության ոլորտների միջև համագործակցությանն աջակցելու և խրախուսելու նպատակ ունի:

բ) Կողմերն աջակցում են միմյանց՝ իրենց կանոնադրական գործառույթներն իրականացնելիս:

գ) Համաձայնագիրը կնպաստի պետական կազմակերպությունների միջև գիտական, կրթական և վարչատնտեսական համագործակցության խորացմանը և ընդլայնմանը:

### 2. Կրթամշակութային համագործակցության ձևերը

ա) կրթահամալիրում ՀՀ ԿԳՆ պատվերով իրականացվող մեդիաօլիմպիադայի շրջանակներում ուսումնական-հայրենագիտական-մշակութային նախագծերի համատեղ մշակում և իրականացում. միջոցառումների կազմակերպում և անցկացում կրթահամալիրի, հուշարձանների, արգելոց-թանգարանների տարածքներում.

բ) հուշարձանների, արգելոց-թանգարանների տարածքների բարեկարգման, մաքրման, կանաչապատման, էկոլոգիական և բնապահպանական նախագծերի իրականացում.

գ) սովորողների մասնագիտական կողմնորոշման, ուսումնագործնական, թեմատիկ պարապմունքների, կլոր սեղանների, արշավների կազմակերպում.

դ) սովորողների վրանային ուսումնական ճամբարների կազմակերպում.

ե) համատեղ նախագծերի համար անհրաժեշտ ընդհանուր նյութատեխնիկական միջոցների ձեռք բերում:

### **3. Համագործակցության ակնկալվող արդյունքները**

ա) Ուսումնագործնական աշխատանքների միջոցով կրթահամալիրի 14-17 տարեկան սովորողները հնարավորություն կունենան ծանոթանալու Հայկական լեռնաշխարհի պատմությանը, տարածաշրջանի պատմաաշխարհագրությանը, հուշարձաններին, պալեո և արդի էկոլոգիական խնդիրներին, կղառնան թանգարանի և հուշարձանի բարեկամ, շփվելով տարբեր մասնագետների հետ՝ կծանոթանան նոր մասնագիտությունների, կստանան մասնագիտական կողմնորոշում:

բ) արգելոց - թանգարանները կարող են դառնալ ուսումնագործնական աշխատանքների և նախագծերի մասնակից:

գ) կրթահամալիրը իր տարաբնույթ ուսումնահետազոտական, գործնական, հայրենագիտական, էկոլոգիական հանրահոշակման աշխատանքները, նախագծերը կարող է իրականացնել ՊՈԱԿ-ի մասնաճյուղ «Մեծամոր» պատմահնագիտական, «Զվարթնոց», «Գլաձորի համալսարան», «Գառնի» պատմամշակութային, «Դիլիջան» Ժողովրդական ճարտարապետության արգելոց-թանգարանների, «Զորաց քարեր» բնակատեղի», «Լոռի բերդ» քաղաքատեղի» պատմամշակութային, «Գոշավանք» պատմաճարտարապետական, «Արփի» բնապատմական արգելոցների և Պատմական միջավայրի պահպանության 11 մարզային ծառայությունների հետ համատեղ:

### **4. Ընդհանուր դրույթներ**

Կողմերի իրավունքները և պարտականությունները կսահմանվեն՝ հաշվի առնելով երկու Կողմերի կանոնադրությունն ու գործող իրավական դաշտը:

Սույն համաձայնագիրը նպատակ չունի իրավական պարտավորություններ սահմանել Կողմերի համար, և եթե Կողմերը ցանկանում են ստանձնել իրավաբանորեն հստակեցված պարտավորություններ համապատասխան գործողությունների կատարման համար, ապա այդ պարտավորությունները պետք է ամրագրվեն Կողմերի միջև օրենքով սահմանված կարգով կնքված համապատասխան Պայմանագրով:

Սույն համաձայնագիրը կարող է փոփոխվել Կողմերի գրավոր համաձայնությամբ: Սույն համաձայնագրով չնախատեսված պայմանները կարող են սահմանվել փոխադարձ համաձայնությամբ:

Սույն համագործակցության համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից:

Սույն համաձայնագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող հայերեն երկու օրինակից: Յուրաքանչյուր կողմի մոտ մնում է համաձայնագրի մեկ օրինակ:

ՀՀ ԿԳՆ «Երևանի «Մխիթար Սեբաստրացի» կրթահամալիր» ՊՈԱԿ

Տնօրեն՝ Աշոտ Բլեյան  
Հասցե՝ ք. Երևան, Ա. Բաբաջանյան 25  
Հեռախոս՝ 010 74 11 12  
Հ/Հ՝ ՀԷԲ «Մետաքս» մասնաճյուղ 163218137665  
ՀՎՀՀ՝ 01804186  
Էլ. փոստ՝ [INFO@MSKH.AM](mailto:INFO@MSKH.AM)

Ստորագրություն  
Կ.Տ.



ՀՀ Մշակույթի նախարարության  
«Պարմամշակութային արգելոց-թանգարանների և  
պատմական միջավայրի պահպանության  
ծառայություն» ՊՈԱԿ

Տնօրեն՝ Վլադիմիր Պողոսյան  
Հասցե՝ ք. Երևան, Թախրով 15  
Հեռախոս՝ 010 58 74 25  
Հ/Հ՝ ՀԷԲ, 163008140325  
ՀՎՀՀ՝ 02511401

Էլ. փոստ՝ [hushardzan@yahoo.com](mailto:hushardzan@yahoo.com), [www.hushardzan.am](http://www.hushardzan.am)

Ստորագրություն  
Կ.Տ.

